ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 01-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Բերդ համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու <<ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> 2020 թվականի դեկտեմբերի 01-ի թիվ 57-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
/Զեկ.Հ.Մանուչարյան/

2. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու <<ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ենթակայության համայնքային հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> 2020 թվականի դեկտեմբերի 01-ի թիվ 58-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
/Զեկ.Հ.Մանուչարյան/

3. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու << ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> 2020 թվականի դեկտեմբերի 01-ի թիվ 60-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
/Զեկ.Ն.Օհանյան/

4. ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ Բերդ համայնքի Այգեձոր, Արծվաբերդ, Մոսեսգեղ, Չինարի, Զորաթան, Պառավաքար, Վ.Կ.Աղբյուր, Ն.Կ.Աղբյուր, Այգեպար բնակավայրերի մարտական գործողությունների հետևանքով չմշակվող հողատարածքների հողի սեփականատերերի ցուցակները հաստատելու մասին:
/Զեկ.Հ.Մանուչարյան/

5. Հրդեհի հետևանքով տուժած ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու մասին:
/Զեկ.Հ.Մանուչարյան/

6. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող 11-045-0720-0001 և 11-045-0720-0002 ծածկագրերով հողամասերի գործառնական նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
/Զեկ.Վ.Գրիգորյան/

7. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականության ամենամյա՝ 2020 թվականի գույքագրման ամփոփ արդյունքները և դուրս գրման ակտերը հաստատելու մասին:
/Զեկ.Ա.Թումանյան/

8. <<ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի կարիքների համար տեխնիկայի ձեռքբերման>> ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը հաստատելու մասին:
/Զեկ.Հ.Մանուչարյան/

9. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող առևտրի սրահը հողամասով Ռոբերտ Կամոյի Այվազյանին օտարելու մասին:
/Զեկ.Վ.Գրիգորյան/

10. Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրության ժամանակ, մարտական գործողությունների հետևանքով զոհված և/կամ/ անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին համայնքային բոլոր հարկատեսակների գծով արտոնություններ տրամադրելու համաձայնություն տալու մասին:
/Զեկ.Հ.Մանուչարյան/

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

Համայնքի ղեկավար՝ **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 02-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի ԹԻՎ 57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2020 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունված օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 11-րդ կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 3-րդ մասի 4-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

1.ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու <<ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> 2020 թվականի դեկտեմբերի 01-ի թիվ 57-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 29-րդ, 34-րդ, 35-րդ և 36-րդ տողերի <<92617>> թվերը փոխարինել <<93289>> թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 03-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի ԹԻՎ 58-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2020 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունված օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

1.ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու <<ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ենթակայության համայնքային հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> 2020 թվականի դեկտեմբերի 01-ի թիվ 58-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված N 1-ից 22 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:

2) որոշմամբ հաստատված N 1-ից 22 հավելվածներում <<92617>> թվերը փոխարինել <<93289>> թվերով:

3) որոշմամբ հաստատված N 5-ից 7 հավելվածներում <<110000>> թվերը փոխարինել <<115000>> թվերով:

4) որոշմամբ հաստատված N 8-ից 18 հավելվածներում <<105000>> թվերը փոխարինել <<110000>> թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 04-Ն

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020թվականի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի <<ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

1.ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու <<ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի 2021 թվականի տեղական բյուջեն հաստատելու մասին>> 2020 թվականի դեկտեմբերի 01-ի թիվ 60-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և հաստատել.

1)եկամուտների գծով - 1378071.2 հազար դրամ,
2)ծախսերի գծով - 1572761.5 հազար դրամ,
3)դեֆիցիտի ծածկմանն ուղղված միջոցներ – 194690.3 հազար դրամ:

2.Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ (հավելված 1):
3.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական դասակարգման՝ (հավելված 2):
4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ (հավելված 3):
5.Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝(հավելված 4):
6.Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝(հավելված 5):
7.Հաստատել համայնքի բյուջեի բյուջեի ծախսերն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ (հավելված 6):
8.Սահմանել,որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:

9.Թույլատրել համայնքի ղեկավարին՝
ա)գանձապետական հաշվի 2020թվականի տարեվերջյան ազատ մնացորդն ինքնուրույն ներառել 2021 թվականի բյուջեի եկամտային մասում և ծախսային մասում ընդգրկել առաջնահերթություն պահանջող ծախսերի ֆինանսավորման համար,
բ)հիմք ընդունելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետը, համայնքի բյուջեում կատարել փոփոխություններ, որոնց հանրագումարը չի կարող գերազանցել հաստատված ծավալի 15%-ը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 05-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՁՈՐ, ԱՐԾՎԱԲԵՐԴ, ՄՈՍԵՍԳԵՂ, ՉԻՆԱՐԻ, ՉՈՐԱԹԱՆ, ՊԱՌԱՎԱՔԱՐ, Վ.Կ.ԱՂԲՅՈՒՐ, Ն.Կ.ԱՂԲՅՈՒՐ, ԱՅԳԵՊԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՉՄՇԱԿՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն որոշմամբ

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել՝ ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ Բերդ համայնքի Այգեձոր, Արծվաբերդ, Մոսեսգեղ, Չինարի, Չորաթան, Պառավաքար, Վ.Կ.Աղբյուր, Ն.Կ.Աղբյուր, Այգեպար բնակավայրերի մարտական գործողությունների հետևանքով չմշակվող հողատարածքների հողի սեփականատերերի ցուցակները:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 06-Ա

ՀՐԴԵՀԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Բերդ համայնքի, Նորաշեն գյուղի վարչական ղեկավար Գոռ Աբրահամյանի զեկուցագիրը առ այն, որ Նորաշեն գյուղի բնակչուհի Ամալիկ Սուրենի Ճուղուրյանի բնակարանը հրդեհի հետևանքով 04.01.2021թ. ամբողջովին այրվել է, ինչպես նաև Մովսես գյուղի բնակչուհի Աննա Սարգսի Համբարձումյանի դիմումը առ այն, որ 30.12.2020թ. հրդեհի հետևանքով այրվել է իր բնակելի տունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի, Նորաշեն գյուղի, 5 Փ., 10 հասցեում հաշվառված Ամալիկ Սուրենի Ճուղուրյանի 04.01.2021թ. հրդեհի հետևանքով տուժած սոցիալապես անապահով ընտանիքին հատկացնել 260,000/երկու հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ օգնություն:

2. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի, Մովսես գյուղի, 4 Փ., 12 հասցեում հաշվառված Աննա Սարգսի Համբարձումյանի 30.12.2020թ. հրդեհի հետևանքով տուժած սոցիալապես անապահով ընտանիքին հատկացնել 150,000 /հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ օգնություն:

3. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի, Նավուր գյուղի, 2 Փ., 23 հասցեում հաշվառված Արամ Էդիկի Նիգոյանի 22.09.2020թ. հրդեհի հետևանքով տուժած ընտանիքին հատկացնել 300,000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ օգնություն:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 07-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 11-045-0720-0001 ԵՎ 11-045-0720-0002 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2020թ. հոկտեմբերի 03-ի N01//06290-2020 դրական եզրակացությունը և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող 0.0125 հա մակերեսով՝ 11-045-0720-0001 և 11-045-0720-0002 ծածկագրերով, բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողերի գործառնական նշանակության փոփոխությունը, որպես բնակավայրերի, նպատակային նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողեր:

2. <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 143 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 08-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՄՓՈՓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՈՒՐՍ ԳՐՄԱՆ ԱԿՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի պահանջներով, 77-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 07-ի թիվ 138-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից ներկայացված գույքագրման ամփոփ արդյունքները

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող և համայնքային ենթակայությամբ գործող ոչ առևտրային կազմակերպությունների ու հիմնարկների գույքագրման ամփոփ արդյունքները՝ համաձայն հավելվածների:

2.Կատարված բոլոր փոփոխություններով հաստատել դուրս գրման ակտերը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 09-Ա

<<ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել <<ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի կարիքների համար տեխնիկայի ձեռքբերման>> ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը:

2.Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար Բերդ համայնքի 2021թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ նախատեսված են՝ ծրագիրը իրականցնելու, և համայնքային ներդրում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 10-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՌՈԲԵՐՏ ԿԱՄՈՅԻ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով, հաշվի առնելով, որ նշված կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք

Համայնքի ավագանին որոշում է՝

1.ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ՀՀ Տավուշի մարզ, Բերդ համայնք, Մոսեսգեղ գյուղ 2 փողոց, թիվ 36 հասցեում գտնվող 30.54 /երեսուն ամբողջ հիսունչորս հարյուրերորդական/ ք.մ մակերեսով արտաքին չափերով և 21.27 /քսանմեկ ամբողջ քսանյոթ հարյուրերորդական/ք.մ մակերեսով ներքին չափերով առևտրի սրահը, 96201 /իննսունվեց հազար երկու հարյուր մեկ/ ՀՀ դրամով և նրա պահպանման ու սպասարկման 125 /մեկ հարյուր քսանհինգ/ ք.մ մակերեսով հողամասը՝ 12000 /տասներկու հազար/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի ձևով օտարել՝ Ռոբերտ Կամոյի Այվազյանին:

2. Օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 11-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ, ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԶՈՀՎԱԾ ԵՎ/ԿԱՄ/ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՈԼՈՐ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18--րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրության ժամանակ, մարտական գործողությունների հետևանքով զոհված և/կամ/ անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին ամենամյա սկզբունքով, Բերդ համայնքի բոլոր հարկատեսակների գծով տրամադրել արտոնություններ 100 տոկոսով:

2.Հարկային պարտավորություններից ազատել.

1)սեփականության իրավունքով զոհված և/կամ/ անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին պատկանող հողի հարկից և գույքահարկից, հարկվող օբյեկտ համարվող բնակելի նշանակության շինությունների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ այն բնակելի նշանակության շինությունների մասով, որտեղ հաշվառված են:

2)տեղական վճարների համար՝ զոհված զինծառայողների և/կամ/ անհայտ կորած զինծառայողների երեխաները արտադպրոցական դաստիարակության հաստատություններում (երաժշտական և արվեստի դպրոցներ և այլն) կսովորեն անվճար, նրանց ընտանիքները կազատվեն աղբահանության և սպասարկվող բնակավայրերում ջրի տեղական վճարներից:

3)մանկապարտեզներն անվճար կլինեն այն զոհված զինծառայողների և/կամ/ անհայտ կորած զինծառայողների երեխաների համար, որոնց ծնողները, օրինական ներկայացուցիչները կամ նրանցից մեկը մշտապես կամ փաստացի հաշվառված է Բերդ համայնքում:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 12-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ԱՐՏՈՒՐ ԿԱՄՈՅԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը

Համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու անդամ հանգուցյալ Արտուր Կամոյի Ներսիսյանի մահացած՝01.01.2021թ., ընտանիքին հատկացնել 300,000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ օգնություն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱՎԱԼՅԱՆ ՀԱՅԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ